



«ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ, ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ  
ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ, ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ  
ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ»  
ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Սույն փաստաթուղթը մշակվել է «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության (ԻՀԱ) «Ազդարարման բազմակողմանի իրթանում Հայաստանում» ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է Բաց կառավարման գործընկերության (ԲԿԳ) աջակցությամբ՝ Եվրոպական միության (ԵՄ) կողմից ֆինանսավորվող «ԵՄ-ն հանուն բարեկարգության՝ Արևելյան գործընկերության համար» ծրագրի շրջանակներում:

Սույն փաստաթղթում արտահայտված է հեղինակի՝ ԻՀԱ ղիրքորոշումը, որի համընկնումը ԲԿԳ և ԵՄ ղիրքորոշման հետ պարտադիր չէ:

Հրապարակումից օգտվելիս պատշաճ հղումը պարտադիր է:

© ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ

ԵՐԵՎԱՆ,

Սեպտեմբեր, 2023թ.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<b>Հապավումներ</b> .....	3
<b>I. Միջազգային ստանդարտներ և առաջավոր փորձ</b> .....	4
1. Ազդարարման հասկացությունը .....	4
2. Պաշտպանության ենթակա սուբյեկտները .....	6
3. Պաշտպանության ենթակա տեղեկատվությունը .....	9
4. Պաշտպանության տրամադրման պայմանները.....	13
<b>II. ՀՀ օրենսդրություն և իրավակիրառ պրակտիկա</b> .....	17
1. Ազդարարման հասկացությունը .....	17
2. Պաշտպանության ենթակա սուբյեկտները .....	17
3. Պաշտպանության ենթակա տեղեկատվությունը .....	19
4. Պաշտպանության պայմանները .....	20
<b>IV. Առաջարկություններ</b> .....	26

## ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԼԳ Արևելյան գործընկերություն

ԵՄ Եվրոպական միություն

ՀԿ Հասարակական կազմակերպություն

ՀՀ Հայաստանի Հանրապետություն

ՄԱԿ Միավորված ազգերի կազմակերպություն

ՏՀԶԿ Տնտեսական համագործակցության և զարգացման  
կազմակերպություն

ՔՀԿ Քաղաքացիական հասարակության կազմակերպություն

## I. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՎՈՐ ՓՈՐՁ

### ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Տեսական աղբյուրներում «ազդարար» եզրույթը սահմանվում է որպես «կազմակերպության անդամ (նախկին կամ ներկա), ով բացահայտում է իր գործատուի վերահսկողության ներքո գտնվող անօրինական, անբարոյական կամ ոչ իրավաչափ գործողությունները անձանց կամ կազմակերպություններին՝ գործողություն իրականացնելու նպատակով»:<sup>1</sup> Նշյալից հետևում է, որ ազդարարումը ենթադրում է այնպիսի տեղեկությունների մասին բարձրաձայնում, որոնք ձեռք են բերվել աշխատանքային համատեքստում:

Նման մոտեցում են որդեգրել մի շարք միջազգային կազմակերպություններ և պետություններ, երբ ազդարարումը դիտարկվում է բացառապես աշխատանքային համատեքստում, և չի ընդգրկում իրավասու մարմիններին ներկայացվող բոլոր տեսակի հաղորդումները, ինչպիսիք են ոստիկանություն ներկայացված քաղաքացիների հաղորդումները կոռուպցիոն դեպքերի վերաբերյալ, որոնց ականատես են եղել բացառապես իրենց՝ որպես հասարակության անդամի կարգավիճակում: Այսպես.

*Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (այսուհետ՝ ՏՀԶԿ) Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն ցանցի կողմից Մտամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի մոնիթորինգի 5-րդ փուլի ազդարարման ոլորտի թիվ 1.1. հենանիշը և վերջինիս մոնիթորինգային ուղեցույցը սահմանում են, որ ազդարարների պաշտպանության օրենսդրությունը ներառի անհատների, ովքեր հայտնում են իրենց աշխատավայրում կոռուպցիոն ապօրինի գործողությունների մասին: «Իրենց աշխատավայրում» եզրույթը նշանակում է, որ ազդարարումն իրականացվում է՝ հիմնվելով պետական կամ մասնավոր հատվածում անձի ընթացիկ կամ անցյալ աշխատանքային գործունեության արդյունքում ձեռք բերված տեղեկատվության վրա, որը չի ներառում քաղաքացիների դիմումները:<sup>2</sup>*

<sup>1</sup> Janet P. Near and Marcia P. Miceli, Organizational Dissidence: The Case of Whistleblowing, Journal of Business Ethics, 1985, p. 4, available at: <https://link.springer.com/article/10.1007/BF00382668>.

<sup>2</sup> OECD, Istanbul Anti-Corruption Action Plan, 5th Round of Monitoring: Assessment Framework, 2023, p. 34, available at: <https://www.oecd.org/investment/anti-bribery/corruption/acn/Istanbul-Anti-Corruption-Action-Plan-5th-Round-Monitoring-Assessment-Framework-ENG.pdf>; OECD, Istanbul Anti-Corruption Action Plan, 5th Round of Monitoring: Guide, 2023, p. 44, available at: <https://www.oecd.org/corruption/anti-bribery/corruption/acn/Istanbul-Anti-Corruption-Action-Plan-5th-Round-Monitoring-Guide-ENG.pdf>:

*Միավորված ազգերի կազմակերպության (այսուհետ՝ ՄԱԿ) «Կոռուպցիայի դեմ պայքարի» կոնվենցիայի 33-րդ հոդվածը դուրս է «ազդարար» եզրույթի դասական մեկնաբանման շրջանակներից և ներառում է «յուրաքանչյուր անձի, ով բարեխղճորեն և ողջամիտ հիմքերով հայտնում է իրավասու մարմիններին կոնվենցիայով սահմանված իրավախախտումների վերաբերյալ ցանկացած փաստի մասին»:<sup>3</sup> Մա նշանակում է, որ վերջինս ներառում է ցանկացած անձի կողմից ազդարարումը, նույնիսկ՝ աշխատող-գործատու հարաբերություններից կամ ցանկացած այլ հարաբերություններից դուրս, օրինակ՝ պայմանագրային, և չի պահանջում, որ ազդարարը լինի որևէ կազմակերպության աշխատակից/անդամ կամ զեկուցի իր գործատուի հետ կապված հարցերի վերաբերյալ:*

*Եվրոպական Միության (այսուհետ՝ ԵՄ) խորհրդարանի կողմից 2019 թվականի ապրիլի 16-ին ընդունված N 2019/1937 հրահանգը տարածվում է մասնավոր կամ պետական հատվածում աշխատող անհատների վրա, ովքեր տեղեկություններ են ստանում աշխատանքի հետ կապված կասկածելի խախտումների մասին:<sup>4</sup>*

*Արևելյան գործընկերության (այսուհետ՝ ԱԷԳ) երկրներից ուսանելի է Ուկրաինայի փորձը: Օրենսդրությամբ ազդարարում են հանդիսանում՝*

*(ա) քրեական հետապնդման մարմիններին ենթադրյալ կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ ներկայացված հաղորդումները<sup>5</sup>.*

*(բ) ազդարարի կողմից՝ կոռուպցիայի, կոռուպցիոն իրավախախտման և «Կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքի այլ խախտումների վերաբերյալ՝ իր աշխատանքային, մասնագիտական, տնտեսական, հասարակական, գիտական գործունեության արդյունքում ձեռք բերված տեղեկությունները ներքին, արտաքին կամ հանրությանն ազդարարման եղանակով հայտնելը:<sup>6</sup>*

*Արդյունքում, (բ) խմբին պատկանող, սակայն՝ աշխատանքային, մասնագիտական, տնտեսական, հասարակական, գիտական գործունեության արդյունքում ձեռք չբերված տեղեկությունները չեն*

---

<sup>3</sup> UN General Assembly, United Nations Convention Against Corruption, 31 October 2003, A/58/422, Article 33, available at: <https://www.arlis.am/documentview.aspx?docID=48021>:

<sup>4</sup> Office of the European Union, Directive (EU) 2019/1937 of the European Parliament and of the Council of 23 October 2019 on the protection of persons who report breaches of Union law. Official Journal of the European Union, L 305/17-L 305/40, Article 4; available at: <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX:32019L1937>.

<sup>5</sup> Criminal Procedure Code of Ukraine, adopted: April 13, 2012, Article 3(16<sup>2</sup>), available at: <https://rm.coe.int/16802f6016>.

<sup>6</sup> Law “On Prevention of Corruption” of Ukraine, adopted: October 14, 2014, article 1, available at: [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-REF\(2020\)079-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-REF(2020)079-e).

ներառվում ազդարարման ներքո և դիտարկվում են որպես քաղաքացիների բողոքներ (կոռուպցիայի վերաբերյալ ծանուցումներ): Այս կապակցությամբ քայլեր են ձեռնարկվում ներդնելու «Կոռուպցիայի կանխարգելման մասին» Ուկրաինայի օրենքի հնարավոր խախտումների մասին ծանուցումների նույնականացման համակարգ ազդարարների կողմից ներկայացված ազդարարումների հետ:<sup>7</sup>

*ԵՄ անդամ չհանդիսացող որոշ երկրներ* ներդրել են ազդարարների իրավունքների պաշտպանությունը աշխատանքային օրենսդրությամբ, հետևաբար՝ ներառում է ազդարարումը աշխատանքային համատեքստում (օրինակ՝ Ավստրալիա, Նոր Զելանդիա, Ճապոնիա, Մեծ Բրիտանիա և Ամերիկայի Միացյալ Նահանգներ):

Որոշ երկրներ ընդունել են աշխատանքային հատուկ օրենքներ՝ պաշտպանելու այն աշխատողներին, ովքեր ազդարարում են որոշակի տեսակի ապօրինությունների մասին, թեև առկա չէ ազդարարման համապարփակ օրենսդրություն: Օրինակ՝ մի քանի երկրներում աշխատողները պաշտպանված են վնասակար գործողություններից՝ առողջության և անվտանգության կամ ոտնձգությունների վերաբերյալ ազդարարելու կամ իրենց գործատուներին տեղական աշխատանքային տեսչություններին զեկուցելու համար (օրինակ՝ Կոլումբիա, Սինգապուր և Չիլի):

Մի շարք երկրներ որդեգրել են ՄԱԿ-ի մոտեցումը և ընդունել օրենքներ, որոնք խրախուսում են անձանց հայտնել կոռուպցիայի, կաշառակերության և կորպորատիվ հանցագործության այլ տեսակների մասին (օրինակ՝ Բրազիլիա, Սինգապուր, Արգենտինա և Կոլումբիա): Նման օրենքները սովորաբար վերաբերում են բոլոր քաղաքացիներին և՛ ոչ միայն աշխատողներին՝ միևնույն ժամանակ սահմանելով ընկերությունների համար ինպերատիվ պահանջ կամ խրախուսման մեխանիզմներ՝ ընդունելու էթիկայի կամ համապատասխանության քաղաքականություն, որը ներառում է ազդարարման ընթացակարգեր և ազդարարների պաշտպանություն:<sup>8</sup>

## ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԸ

Ազդարար է հանդիսանում, որպես կանոն, կազմակերպության աշխատողը կամ անդամը: Նշյալը պայմանավորված է նրանով, որ ազդարարների պաշտպանության էությունը կայանում է նրանում, որ ազդարարին պաշտպանի այն տեղեկությունը հրապարակելուց, որը, այլ պարագայում, իրավասու չէ հրապարակել՝ լինի դա օրենսդրությամբ թե աշխատանքային պայմանագրերով պաշտպանված

<sup>7</sup> OECD (2022), Anti-Corruption Reforms in Ukraine: Pilot 5th Round of Monitoring Under the OECD Istanbul Anti-Corruption Action Plan, pp. 52, 61; available at: <https://doi.org/10.1787/b1901b8c-en>.

<sup>8</sup> “Whistleblowing across the globe”, Ius Laboris, available at: <https://iuslaboris.com/insights/whistleblowingacross-the-globe/>.

տեղեկատվություն: Հետևաբար, առնվազն պետական և մասնավոր հատվածի աշխատողները պետք է ներառվեն եզրույթի ցանկացած սահմանման մեջ: Այնուամենայնիվ, մի շարք միջազգային ձևաչափեր խորհուրդ են տալիս, որ պաշտպանության շրջանակը ներառի «մարդկանց հնարավորինս լայն շերտեր»<sup>9</sup>: Այսպես.

*ՏՀԶԳ* Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն ցանցի Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի մոնիթորինգի 5-րդ փուլի ազդարարման ոլորտի թիվ 1.2. հենանիշը սահմանում է այն նվազագույն չափանիշները, որոնց հիման վրա ազդարարման հետ կապված օրենսդրությունը պետք է տարածվի՝

- ◆ հանրային ոլորտի աշխատողների վրա.
- ◆ մասնավոր ոլորտի աշխատողների վրա.
- ◆ պետական սեփականություն հանդիսացող ձեռնարկությունների խորհրդի անդամների և աշխատողների վրա:<sup>10</sup>

«Աշխատողներ» եզրույթը մեկնաբանվում է որպես ազգային օրենսդրության համաձայն աշխատող որակվող անձինք: Պետական սեփականություն հանդիսացող ձեռնարկությունների խորհրդի անդամների և աշխատողների՝ որպես ազդարար որակվելը կարող է փաստվել ինչպես օրենսդրությամբ նախատեսմամբ, այնպես էլ՝ նախադեպային իրավունքի կամ պաշտոնական ուղեցույցների միջոցով:

*ԵՄ N 2019/1937 հրահանգը* տարածվում է մասնավոր կամ պետական հատվածում աշխատող անհատների վրա, որը ներառում է ներկա և նախկին՝

- ◆ աշխատողներ, որը լայն սահմանում է և ներառում է ոչ միայն աշխատողներին, այլև ցանկացած անհատի, ով ծառայություններ է մատուցում մեկ այլ անձի համար և նրա ղեկավարությամբ՝ վարձատրության դիմաց: Հետևաբար, պաշտպանությունը տարածվում է ոչ ստանդարտ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող աշխատողների, ներառյալ՝ որոշակի ժամկետով կնքված պայմանագրի հիման վրա աշխատողների, գործակալության պայմանագրի հիման վրա աշխատողների և այլ ատիպիկ հարաբերությունների մեջ գտնվող աշխատողների վրա.

---

<sup>9</sup> Տե՛ս, օրինակ, UNODC, Resource Guide on Good Practices in the Protection of Reporting Persons, 2015, p. 9.; available at: [www.unodc.org/documents/corruption/Publications/2015/15-04741\\_Person\\_Guide\\_eBook.pdf](http://www.unodc.org/documents/corruption/Publications/2015/15-04741_Person_Guide_eBook.pdf); PILON, Who, What, Why of Whistleblower Protection for the Pacific, 2018, p. 3; available at: <https://pilonsec.org/digitalibrary/corruption-resources/>.

<sup>10</sup> OECD, Istanbul Anti-Corruption Action Plan, 5th Round of Monitoring: Assessment Framework, 2023, pp. 34-35.

- ◆ ինքնազբաղված անձինք, ներառյալ՝ ֆրիլանս աշխատողները, կապալառուները և ենթակապալառուները.
- ◆ բաժնետերեր.
- ◆ ձեռնարկության վարչական, կառավարման կամ վերահսկիչ մարմնի անդամներ.
- ◆ կամավորներ.
- ◆ աշկերտներ (վճարովի կամ չվճարվող).
- ◆ անձինք, ովքեր աշխատում են կապալառուների, ենթակապալառուների և մատակարարների հսկողության/ղեկավարության ներքո.
- ◆ աշխատանքի դիմորդներ և նոր աշխատանքի ընդունված անձինք, ովքեր դեռ չեն սկսել աշխատանքը, քանի որ նրանք կարող են նկատել ապօրինի գործողություն կամ անբարեխիղճ գործելակերպ աշխատանքի ընդունման գործընթացում կամ նախապայմանագրային բանակցությունների ժամանակ, որի արդյունքում վերջիններիս նկատմամբ կարող են կիրառվել վնասակար գործողություններ, օրինակ՝ աշխատանքի բացասական բնութագրի կամ սև ցուցակում ներառվելու տեսքով.
- ◆ միջնորդներ (անձինք, ովքեր օգնում են ազդարարին աշխատանքի հետ կապված համատեքստում ազդարարման գործընթացում).
- ◆ ազդարարի հետ կապված երրորդ անձինք, ովքեր կարող են ենթարկվել աշխատանքի հետ կապված վնասակար գործողության (օրինակ՝ գործընկերները կամ հարազատները).
- ◆ իրավաբանական անձինք, որոնց հետ ազդարարը կապված է աշխատանքի հետ կապված համատեքստում:<sup>11</sup>

*ԱլԳ երկրներից* Ուկրաինայում ազդարարների պաշտպանությունը տարածվում է ցանկացած անձի վրա. թե մասնավոր, թե՛ պետական հատվածի աշխատողները կարող են ներկայացնել ազդարարումներ և պաշտպանություն ստանալ վնասակար գործողությունների դեպքում: Օրենքը տարածվում է աշխատողների, ինքնազբաղված անձանց, բաժնետերերի և խորհրդի անդամների, վճարովի կամ չվարձատրվող կամավորների և աշկերտների, կապալառուների, ենթակապալառուների և

---

<sup>11</sup> Office of the European Union, Directive (EU) 2019/1937 of the European Parliament and of the Council of 23 October 2019 on the protection of persons who report breaches of Union law, Article 4.



մատակարարների վրա, ինչպես նաև՝ անձանց, որոնց աշխատանքային հարաբերություններն ավարտվել են կամ ներգրավված են աշխատանքի ընդունման գործընթացում:<sup>12</sup>

Հարկ է ընդգծել, որ, բացի ազդարարից, այլ անձինք ևս կարող են վնասակար գործողությունների ենթարկվել ազդարարման ընթացքում և դրանից հետո, հետևաբար՝ նրանք ևս պետք է ենթարկվեն պաշտպանության: Միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքում այդ շրջանակը պետք է ներառի հետևյալը՝

- ◆ անձինք, ովքեր սխալմամբ ընկալվել են որպես ազդարար.
- ◆ անձինք, ում նկատմամբ կարող են կիրառվել վնասակար գործողություններ՝ այլ անձանց ենթադրության հիման վրա, որ վերջիններս պատրաստվում են ազդարարել.
- ◆ լրագրողներ (թեև *ՄՄԿ-ի* «Կոռուպցիայի դեմ պայքարի» կոնվենցիայի 33-րդ հոդվածը, որպես կանոն, չի կիրառվում այն լրագրողների նկատմամբ, ովքեր հրապարակում և տարածում են կոռուպցիայի վերաբերյալ տեղեկատվություն, քանի որ դա չի դիտարկվում որպես իրավասու մարմնին ազդարարում, կոնվենցիայի 13-րդ հոդվածի 1-ին մասի դ) կետը պահանջում է մասնակից պետություններից համապատասխան միջոցներ ձեռնարկել՝ ուղղված կոռուպցիայի մասին տեղեկատվություն փնտրելու, ստանալու, հրապարակելու և տարածելու ազատությունը հարգելուն, խրախուսելուն և պաշտպանելուն: Սա ենթակա է միայն օրենքով նախատեսված որոշակի սահմանափակումների, որոնք անհրաժեշտ են այլ անձանց իրավունքները կամ համբավը հարգելու կամ ազգային անվտանգության կամ հասարակական կարգի պահպանման կամ բնակչության առողջության կամ բարոյականության պաշտպանության համար:<sup>13</sup>

## ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ նկատվում է միտում՝ ընդլայնելու պաշտպանության ենթակա տեղեկատվություն շրջանակը՝ ներառելով ապօրինի գործողությունների կամ հանրային շահերին հնարավոր վնաս պատճառող ցանկացած հարց:<sup>14</sup>

<sup>12</sup> OECD (2022), Anti-Corruption Reforms in Ukraine: Pilot 5th Round of Monitoring Under the OECD Istanbul Anti-Corruption Action Plan, p. 53; available at: <https://doi.org/10.1787/b1901b8c-en>.

<sup>13</sup> Տե՛ս, օրինակ, UN-PRAC, Whistle-Blower Protections And Corruption Reporting In Pacific Island Countries, November 2021, p. 9; available at: <https://www.undp.org/sites/g/files/zskgke326/files/migration/pacific/pdf>; PILON, Guiding Principles for Protecting Whistleblowers and Encouraging Protected Disclosures, 2017, page 9. available at: <https://pilonsec.org/digital-library/corruption-resources/>.

<sup>14</sup> UNODC, Resource Guide on Good Practices in the Protection of Reporting Persons, 2015, p. 22.

«Թրանսփարենսի Ինթերնեշնլ»-ի կողմից ընդունված «Ազդարարների պաշտպանության միջազգային սկզբունքները» ջատագովում են ապօրինի գործողությունների լայն սահմանման համար, որը ներառում է, բայց չի սահմանափակվում կոռուպցիայով<sup>15</sup> և Մեծ քսանյակի կողմից ընդունված «Ազդարարների արդյունավետ պաշտպանության բարձր մակարդակի սկզբունքներից» սկզբունք 2-ը նախատեսում է, որ պաշտպանված ազդարարումների շրջանակը պետք է լինի լայնորեն, բայց՝ հստակորեն սահմանված:<sup>16</sup> Նշյալը պայմանավորված է այն հանգամանքով, որ պետությունների կողմից միայն կոռուպցիոն հանցագործությունների մասին ազդարարումների թույլատրման պարագայում առկա է վտանգ, որ մի շարք այլ կարևոր բացահայտումներ չեն պաշտպանվի: Կոռուպցիոն չհամարվող մի շարք ապօրինի գործողություններ կարող են նմանապես կարևորվել՝ հանրային շահին հասցված վնասի տեսանկյունից, ինչպես նաև հնարավոր են իրավիճակներ, երբ ապօրինի գործողությունը, որն առերևույթ իրենից ենթադրում է լուրջ վարչական կամ ընթացակարգային խախտում, հետաքննության արդյունքներում բացահայտվի՝ որպես ավելի մեծ կոռուպցիոն սխեմայի բաղկացուցիչ: Ավելին, որոշ ազդարարումների դեպքում վերջիններիս կոռուպցիոն բնույթն ի սկզբանե կարող է ակնհայտ չլինել, օրինակ՝ բնապահպանական հանցագործությունների պարագայում, սակայն հետաքննության արդյունքում կարող է բացահայտվել, որ վերջինս կապված է կոռուպցիոն գործունեության հետ: Բացի այդ, ազդարարման առարկա իրավախախտումները կոռուպցիայով սահմանափակելը կարող է հավելյալ պարտականություն սահմանել՝ պոտենցիալ ազդարարների կողմից նախքան ազդարարումը պարզել, թե արդյոք վերջինս հանդիսանում է կոռուպցիոն գործողություն, թե՛ ոչ, ինչը կարող է ռիսկի ենթարկել ազդարարներին, ինչպես նաև՝ նրանց գործընկերներին և նրանց հարազատներին:<sup>17</sup>

*ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ պայքարի»* կոնվենցիան, հաշվի առնելով իր հակակոռուպցիոն ուղղվածությունը, պաշտպանության ենթակա տեղեկատվությունը սահմանափակում է կոռուպցոն իրավախախտումներով, որոնք սահմանված են կոնվենցիայով:<sup>18</sup>

---

<sup>15</sup> Transparency International, International principles for whistleblower legislation: Best practices for laws to protect whistleblowers and support whistleblowing in the public interest, 2013, p. 4, available at: [https://images.transparencycdn.org/images/2013\\_WhistleblowerPrinciples\\_EN.pdf](https://images.transparencycdn.org/images/2013_WhistleblowerPrinciples_EN.pdf).

<sup>16</sup> The G20 Anti-Corruption Working Group, G20 High-Level Principles for the Effective Protection of Whistleblowers, 2019, pages 2-3; available at: [https://www.unodc.org/documents/corruption/G20-Anti-Corruption-Resources/Thematic-Areas/PublicSector-Integrity-and-Transparency/G20\\_High-Level\\_Principles\\_for\\_the\\_Effective\\_Protection\\_of\\_Whistleblowers\\_2019.pdf](https://www.unodc.org/documents/corruption/G20-Anti-Corruption-Resources/Thematic-Areas/PublicSector-Integrity-and-Transparency/G20_High-Level_Principles_for_the_Effective_Protection_of_Whistleblowers_2019.pdf).

<sup>17</sup> UNODC, Speak up for health! Guidelines to enable whistle-blower protection in the health-care sector, 2021, p. 10; available at: [https://www.unodc.org/documents/corruption/Publications/2021/Speak\\_up\\_for\\_Health\\_-\\_Guidelines\\_to\\_Enable\\_Whistle-Blower\\_Protection\\_in\\_the\\_Health-Care\\_Sector\\_EN.pdf](https://www.unodc.org/documents/corruption/Publications/2021/Speak_up_for_Health_-_Guidelines_to_Enable_Whistle-Blower_Protection_in_the_Health-Care_Sector_EN.pdf).

<sup>18</sup> UN General Assembly, United Nations Convention Against Corruption, 31 October 2003, A/58/422, Article 33D

ՏՀԶԳ Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն ցանցի Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի մոնիթորինգի 5-րդ փուլի ազդարարման ոլորտի թիվ 1.1 հենանիշը, կրկին ելնելով իր հակակոռուպցիոն ուղղվածությունը, պաշտպանության ենթակա տեղեկատվությունը սահմանափակում է կոռուպցոն իրավախախտումներով՝ սահմանելով, որ օրենքի նյութական շրջանակը առնվազն պետք է ներառի հետևյալը.

- կոռուպցիոն հանցագործություններ
- շահերի բախման, գույքի և շահերի հայտարարագրերի, անհամատեղելիության, նվերների և հակակոռուպցիոն այլ սահմանափակումների կանոնների խախտումներ:<sup>19</sup>

ԵՄ N 2019/1937 հրահանգով նախատեսված պաշտպանությունը ներառում է ԵՄ օրենսդրությամբ նախատեսված իրավախախտումների վերաբերյալ ազդարարումները հետևյալ ոլորտներում՝

- ◆ պետական գնումներ.
- ◆ ֆինանսական ծառայություններ, ապրանքներ և շուկաներ և փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելում.
- ◆ արտադրանքի անվտանգություն և համապատասխանություն.
- ◆ տրանսպորտի անվտանգություն.
- ◆ շրջակա միջավայրի պահպանություն.
- ◆ ճառագայթային պաշտպանություն և միջուկային անվտանգություն.
- ◆ սննդամթերքի և կերի անվտանգություն, կենդանիների առողջություն և բարեկեցություն.
- ◆ հանրային առողջություն.
- ◆ սպառողների պաշտպանություն.
- ◆ գաղտնիության և անձնական տվյալների պաշտպանություն, ցանցային և տեղեկատվական համակարգերի անվտանգություն.
- ◆ խախտումներ, որոնք ազդում են ԵՄ ֆինանսական շահերի վրա.
- ◆ ԵՄ ներքին շուկայի հետ կապված խախտումներ:<sup>20</sup>

Մինևույն ժամանակ, հրահանգը թույլ է տալիս անդամ պետություններին ընդլայնել իրենց ազգային դրույթները՝ ներառելով վերը թվարկվածներից դուրս ոլորտներ՝ ազգային մակարդակով ազդարարների պաշտպանության համապարփակ և համահունչ շրջանակը խթանելու նպատակով: Անդամ պետությունների մեծամասնությունը որդեգրել է այս մոտեցումը իրենց կիրարկող օրենսդրության մեջ՝

<sup>19</sup> OECD, Istanbul Anti-Corruption Action Plan, 5th Round of Monitoring: Assessment Framework, 2023, p. 34.

<sup>20</sup> Office of the European Union, Directive (EU) 2019/1937 of the European Parliament and of the Council of 23 October 2019 on the protection of persons who report breaches of Union law, Article 2.

սահմանելով նյութական ավելի լայն շրջանակ, քան սահմանված է հրահանգով, որը ներառում է ազդարարման հնարավորություն ազգային օրենսդրության ցանկացած խախտման կամ այլ լուրջ հարցերի վերաբերյալ (այդ թվում՝ հանրային շահերին հասցվող վնասը կամ դրա սպառնալիքները կամ մարդու իրավունքների խախտումները): Օրինակ, Գերմանիայի «Ազդարարման համակարգի մասին» օրենքը ընդգրկում է նաև այն խախտումները, որոնք պատժվում են օրենքով (քրեական հանցագործություններ) և տուգանքով պատժվող խախտումները (վարչական իրավախախտումներ). վերջինս, սակայն, միայն այնքանով, որքանով խախտված դրույթը ծառայում է աշխատողների կամ նրանց ներկայացուցչական մարմինների կյանքի, ֆիզիկական կամ հոգևոր անձեռնմխելիության, առողջության կամ իրավունքների պաշտպանությանը:<sup>21</sup> Բելգիայի ազդարարման օրենսդրությունը թույլատրում է ազդարարել նաև հարկային, սոցիալական և այլ խարդախությունների վերաբերյալ,<sup>22</sup> իսկ Իռլանդիայում՝ ազդարարումները կարող են ներառել նաև աշխատանքային պայմանագրով նախատեսված իրավական պարտավորությունները չկատարելու և օրենքով նախատեսված որոշ այլ հարցեր:<sup>23</sup>

*ՍլՋ երկրներից Ուկրաինայում* օրենսդրությունը ևս ենթադրում է միայն ազդարարումներ կոռուպցիայի, կոռուպցիոն իրավախախտման և «Կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքի այլ խախտումների վերաբերյալ:<sup>24</sup> Միննույն ժամանակ, ՔՀԿ-ների կողմից բարձրաձայնվում է ոչ միայն կոռուպցիոն, այլ նաև այլ ոլորտներին առնվող ազդարարումների պաշտպանության վրա կենտրոնանալու կարևորության մասին, ինչպիսիք են մարդու իրավունքների, շրջակա միջավայրի պահպանության, սննդամթերքի և տրանսպորտի անվտանգության և այլ խախտումները:<sup>25</sup>

---

<sup>21</sup> Whistleblower Protection Act of Germany (Gesetz für einen besseren Schutz hinweisgebender Personen sowie zur Umsetzung der Richtlinie zum Schutz von Personen, die Verstöße gegen das Unionsrecht melden - Hinweisgeberschutzgesetz), Article 1, clause 2, adopted: May 12, 2023, available at: <https://www.recht.bund.de/bgb/1/2023/140/VO.html>.

<sup>22</sup> Law on the protection of persons who report violations of Union or national law found within a legal entity of the private sector, (Belgium), adopted: November 28, 2022, Article 2, Clause 1, available at: <https://www.ejustice.just.fgov.be/eli/loi/2022/11/28/2022042980/moniteur#top>.

<sup>23</sup> Protected Disclosures Act 2014 (Republic of Ireland) (Revised), adopted: July 8, 2014, Section 5, available at: <https://revisedacts.lawreform.ie/eli/2014/act/14/front/revised/en/html>.

<sup>24</sup> Law “On Prevention of Corruption” of Ukraine, adopted: October 14, 2014, article 1.

<sup>25</sup> TI Ukraine, “Protection of Whistleblowers: What Has (Not) Changed?”, January 1, 2022, available at: <https://ti-ukraine.org/en/blogs/protection-of-whistleblowers-what-has-not-changed/>.

ԵՄ անդամ չհանդիսացող այլ երկրների փորձը ևս ցույց է տալիս, որ մի շարք երկրներ, օրինակ՝ Միացյալ Թագավորությունը,<sup>26</sup> Ավստրալիան<sup>27</sup> և Մալդիվները, հակված են սահմանել օրենքի գործունեության նյութական լայն, միևնույն ժամանակ՝ հստակ ամրագրված շրջանակ՝ չսահմանափակվելով կոռուպցիոն բնույթի իրավախախտումներով: Այսպես, Մալդիվների «Ազդարարների պաշտպանության մասին» օրենքը թույլ է տալիս ազդարարել տեղեկության հետևյալ տեսակների վերաբերյալ՝

- ◆ օրենքի և վարչական կանոնակարգերի ցանկացած խախտում.
- ◆ մարդու իրավունքների խախտում.
- ◆ միջազգային մարդասիրական իրավունքի խախտում.
- ◆ կոռուպցիա.
- ◆ հանրային առողջությանը կամ անվտանգությանը հասցված վտանգ.
- ◆ շրջակա միջավայրի պահպանությանը հասցված վտանգ.
- ◆ պետական պաշտոնի չարաշահում.
- ◆ արդարադատության կոպիտ սխալ (անգլ.՝ miscarriage of justice).
- ◆ ռեսուրսների վատնում կամ վատ կառավարում.
- ◆ վնասակար գործողություններ՝ կապված ազդարարման հետ.
- ◆ վերը նշվածներից որևէ մեկը դիտավորությամբ պարտակելուն ուղղված ցանկացած քայլ:<sup>28</sup>

## ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Ազդարարման օրենսդրության հաջորդ կարևոր բաղադրիչ են կազմում «ողջամտության» (անգլ.՝ reasonableness) և «բարեխղճություն» (անգլ.՝ good faith) տարրերը՝ որպես ազդարարներին պաշտպանության տրամադրման նախապայմաններ: Միջազգային փորձում մի շարք տարբեր մոտեցումներ են որդեգրվել՝ կապված նշյալ ասպեկտների ներառման և մեկնաբանման հետ: Այսպես.

<sup>26</sup> Public Interest Disclosure Act 1998 (United Kingdom), assented to: July 2, 1998, Section 43B, available at: <https://www.legislation.gov.uk/ukpga/1998/23/contents>.

<sup>27</sup> Public Interest Disclosure Act 2013 (Australia), assented to July 15, 2013, Section 29, available at: <https://www.legislation.gov.au/Details/C2013A00133>.

<sup>28</sup> Whistleblower Protection Act of Maldives No: 16/2019, adopted: October 08, 2019, Article 7, available at: <https://wwwex.ilo.org/dyn/natlex2/natlex2/files/download/110264/MDV110264%20Eng.pdf>.

ՄՄԿ-ի «Կոռուպցիայի դեմ պայքարի» կոնվենցիայի 33-րդ հոդվածը սահմանում է, որ պաշտպանության են ենթակա այն անձինք, որոնք ազդարարում են «բարեխղճորեն և ողջամիտ հիմքերով»:<sup>29</sup> Հետևաբար, եթե անձը ողջամիտ հիմքեր ունի ենթադրելու, որ տեղեկատվությունը ենթադրում է իրավախախտման կամ անբարեխիղճ գործելակերպի առկայություն, և որ համոզմունքը ողջամիտ է իր դիրքում գտնվող անձի համար՝ հիմնվելով իրեն հասանելի տեղեկատվության վրա, այդ անձը ենթակա է պաշտպանության: Այս հանգամանքներում, նույնիսկ եթե անձը սխալվում է իր տրամադրած տեղեկատվության բովանդակության հարցում և չի հայտնաբերվում կոռուպցիա կամ իրավախախտում, վերջինս ենթակա են պաշտպանության:<sup>30</sup>

Միևնույն ժամանակ, մի շարք կազմակերպություններ և պետություններ մտահոգություններ են հայտնել «բարեխղճության» տարրի չափից ավելի շեշտադրման կամ այն «շարժառիթների» հետ նույնականացնելու վտանգի առնչությամբ: Այս կապակցությամբ որդեգրվել են տարբեր մոտոցումներ: Այսպես.

Առաջին մոտեցումն այն է, որ որոշ կառույցներ և պետություններ առհասարակ չեն ներառում բարեխղճության տարրը ազդարարներին պաշտպանության տրամադրման պայմանների մեջ: Օրինակ, Եվրոպայի խորհուրդը չի ներառել բարեխղճության տարրն իր «Ազդարարների պաշտպանությանն ուղղված առաջարկություններում»՝ սահմանելով «ազդարարման ճշմարտացիությանը հավատարմ ողջամիտ հիմքեր ունենալու» ստանդարտը:<sup>31</sup> Նմանապես, ԵՄ N 2019/1937 հրահանգը ևս չի ներառում բարեխղճության տարրը ազդարարների պաշտպանության պայմանների մեջ: Փոխարենը, ի թիվս այլ չափորոշիչների, ազդարարները ենթակա են պաշտպանության, եթե «նրանք ողջամիտ հիմքեր են ունեցել ենթադրելու, որ հաղորդվող խախտումների մասին տեղեկատվությունը ճշմարիտ է եղել ազդարարման պահին»:<sup>32</sup>

Հաջորդ տարածված մոտեցումն այն է, որ եթե օրենսդիրն, այնուամենայնիվ, որոշում է ներառել ազդարարման «բարեխղճության» պահանջը, վերջինս փոխկապակցվում է ազդարարման առարկա կազմող տեղեկատվության և ոչ թե՛ ազդարարի շարժառիթների հետ: Համանման մոտեցում է որդեգրել

---

<sup>29</sup> UN General Assembly, United Nations Convention Against Corruption, 31 October 2003, A/58/422, Article 33D

<sup>30</sup> UNODC, Resource Guide on Good Practices in the Protection of Reporting Persons, 2015, p. 24-25.

<sup>31</sup> Council of Europe, Recommendation CM/Rec(2014)7 of the Committee of Ministers to member States on the protection of whistleblowers, Principle 22, See also: Explanatory Memorandum, para. 85, available at: <https://wcd.coe.int/ViewDoc.jsp?id=2188855&Site=CM>.

<sup>32</sup> Office of the European Union, Directive (EU) 2019/1937 of the European Parliament and of the Council of 23 October 2019 on the protection of persons who report breaches of Union law, Article 6(a).

ՏՀԶԿ Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն ցանցի Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագիրը, որի մոնիթորինգի 5-րդ փուլի ազդարարման ոլորտի թիվ 1.1. հենանիշը և վերջինիս մոնիթորինգային ուղեցույցը պահանջում են, որ օրենքի մակարդակով պետք սահմանված լինի ազդարարների պաշտպանության երաշխավորմանն ուղղված հետևյալ ստանդարտները.

- ◆ Անձանց որպես ազդարար որակելու համար բավարար պետք է լինի *«ազդարարման պահին ողջամիտ համոզմունք՝ արարքի սխալ լինելու վերաբերյալ»* (“reasonable belief of wrongdoing at the time of reporting”) շեմը: Կիրառվող թեստը պետք է լինի՝ արդյոք համարժեք գիտելիքներ, կրթություն և փորձ ունեցող որևէ մեկը (հասակակիցը) կարող է համաձայնվել նման համոզմունքի հետ: Սա, մասնավորապես, նշանակում է, որ ազդարարը ենթակա է պաշտպանության, նույնիսկ եթե անձի հաղորդումն արվել է բարեխիղճ մոլորությամբ, սակայն հանցագործությունը չի ապացուցվում հետաքննության արդյունքում: Հետևաբար, ուղղակի դիտավորությամբ, այսինքն՝ գիտակցաբար բացահայտ կեղծ տվյալների հաղորդումը այս չափանիշի համաձայն չեն հանդիսանում ազդարարումներ: Սա նաև նշանակում է, որ անհատների կողմից իրենց աշխատավայրում կոռուպցիոն դեպքի կամ այլ խախտման կատարման վերաբերյալ ազդարարելիս դրանց ճիշտ լինելու վերաբերյալ ազդարարելու պահին ողջամիտ համոզմունք ունենալը պետք է լինի բավարար վերջիններիս պաշտպանություն տրամադրելու համար, և չպետք է նախատեսված լինեն ճշմարտության ստուգմանն ուղղված հավելյալ պարտավորություններ ազդարարների համար:
- ◆ Ազդարարի շարժառիթը կամ ազդարարման բարեխիղճությունը պաշտպանություն ստանալու նախապայմաններ չեն: Ազդարարի շարժառիթները պետք է փոխկապակցված չլինեն օրենքով նախատեսված պաշտպանությունների կիրառման համար: Հետևաբար, օրենքները, որոնք պահանջում են, որ ազդարարումներն իրականացվեն բարեխիղճորեն կամ նմանատիպ այլ պայմանների առկայությամբ (օրինակ՝ առանց անձնական շահ հետապնդելու ազդարարման պահանջը) չեն համապատասխանի այս տարրին: Այնուամենայնիվ, եթե օրենքը ներառում է բարեխիղճության պահանջ, պետությունը կհամապատասխանի այս չափանիշին, եթե օրենքը կամ նախադեպային իրավունքը նախատեսեն, որ ազդարարի շարժառիթներն էական չեն՝ ազդարարին պաշտպանություն տրամադրելու որոշում կայացնելիս:
- ◆ Եթե պաշտպանություն տրամադրելու նախապայմանները ներառում են «հանրային շահ» հետապնդելու պահանջ, ապա կոռուպցիոն իրավախախտումները մշտապես որակվում են

որպես «հանրային շահերից բխող», և դրանց վերաբերյալ ազդարարումները ենթակա են պաշտպանության:<sup>33</sup>

Հաջորդ մոտեցման պարագայում գործում է «բարեխղճության կանխավարկածը», և բարեխղճության բացակայության ապացուցման բեռը դրվում է մեղադրվող անձի վրա: Այս մոտեցում է որդեգրել, օրինակ, Ամերիկյան պետությունների կազմակերպությունը:<sup>34</sup>

Վերջին մոտեցումը կիրառելի է այն պետությունների պարագայում, որոնց օրենսդրությամբ ազդարարների պաշտպանության մեխանիզմները նախատեսում են փոխհատուցման տրամադրում: Մոտեցման էությունը կայանում է նրանում, որ «բարեխղճությունը» հանդիսանում է ոչ թե ազդարարներին պաշտպանության, այլ՝ փոխհատուցման տրամադրման նախապայման: Օրինակ, Մեծ Բրիտանիան, 2013 թվականին կատարեց համապատասխան օրենսդրական փոփոխությունը՝ ուղղված նշյալ մեխանիզմին անցում կատարելուն, որի արդյունքում այն դեպքերում, երբ պարզվում է, որ ազդարարումն իրականացվել է ոչ բարեխիղճ շահագրգռվածությամբ (անգլ.՝ bad faith), ազդարարման պատճառով վնասակար գործողությունների ենթարկված անձի փոխհատուցումը կարող է կրճատվել առավելագույնը 25 տոկոսով, եթե համարվի արդարացի՝ հաշվի առնելով բոլոր մյուս հանգամանքները:<sup>35</sup>

Այժմ երկրներից ուսանելի է Ուկրաինայի փորձը այնքանով, որ վերջինս, չնախատեսելով «բարեխղճության» նախապայման, ոչ միայն նախատեսում է «ողջամտության» նախապայմանը, այն է՝ «համոզմունք՝ տեղեկատվության ճշմարտացիության վերաբերյալ», այլև Ուկրաինայի կոռուպցիայի կանխարգելման ազգային գործակալության կողմից մշակված ուղեցույցներում մեկնաբանում է այն որպես «անձը վստահ է, որ իր հաղորդած տեղեկատվությունը կարող է պարունակել կոռուպցիոն հանցագործության հնարավոր փաստեր՝ հիմնվելով իր կյանքի փորձի, տարիքի, մասնագիտական փորձի և այլ հանգամանքների վրա»:<sup>36</sup>

---

<sup>33</sup> OECD, Istanbul Anti-Corruption Action Plan, 5th Round of Monitoring: Assessment Framework, 2023, p. 34; OECD, Istanbul Anti-Corruption Action Plan, 5th Round of Monitoring: Guide, 2023, p. 43.

<sup>34</sup> OAS, Model Law to Facilitate and Encourage the Reporting of Acts of Corruption and to Protect Whistleblowers and Witnesses, 22 March 2013, article 2(h); available at: [http://www.oas.org/en/sla/dlc/mesicic/docs/model\\_law\\_reporting.pdf](http://www.oas.org/en/sla/dlc/mesicic/docs/model_law_reporting.pdf).

<sup>35</sup> United Kingdom (2013). Enterprise and Regulatory Reform Act (ERRA), which changes the provisions of the Public Interest Disclosure Act (1998) and Employment Rights Act (1996).

<sup>36</sup> NACP (2021), Regarding the legal status of a whistleblower, available at: <https://nazk.gov.ua/uk/documents/shhodo-pravovogo-statusu-vykryvacha/>.



## II. ՀՀ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԻՐԱՌ ՊՐԱԿՏԻԿԱ

### ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

«Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ ազդարարումը սահմանվում է որպես՝ «ազդարարի կողմից պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, ինչպես նաև կազմակերպություններում կոռուպցիոն բնույթի դեպքի կամ շահերի բախման կամ վարքագծի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ հայտարարագրման հետ կապված խախտման կամ հանրային շահերին ուղղված այլ վնասի կամ դրանց սպառնալիքի վերաբերյալ տեղեկությունների գրավոր կամ բանավոր հաղորդում սույն օրենքով նախատեսված իրավասու անձին կամ մարմին»:

Նույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ ազդարարը սահմանվում է որպես՝ «ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը սույն օրենքով նախատեսված կարգով բարեխղճորեն հաղորդում է տեղեկություններ կոռուպցիոն բնույթի դեպքի կամ շահերի բախման կամ վարքագծի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ հայտարարագրման հետ կապված խախտման կամ հանրային շահերին ուղղված այլ վնասի կամ դրանց սպառնալիքի վերաբերյալ՝ կապված այն պաշտոնատար անձի, մարմնի, կազմակերպության կամ կազմակերպության աշխատակցի հետ, որոնց հետ նա գտնվում կամ գտնվել է աշխատանքային կամ քաղաքացիաիրավական կամ վարչաիրավական կամ այլ հարաբերությունների մեջ, կամ որին դիմել է ծառայությունների մատուցման նպատակով, կամ որը սխալմամբ ընկալվել է որպես ազդարար»:<sup>37</sup>

«Կապված այն պաշտոնատար անձի, մարմնի, կազմակերպության կամ կազմակերպության աշխատակցի հետ, որոնց հետ նա գտնվում կամ գտնվել է աշխատանքային կամ քաղաքացիաիրավական կամ վարչաիրավական կամ այլ հարաբերությունների մեջ» բառերից պարզ է դառնում, որ ՀՀ-ում ազդարարումը դիտարկվում է աշխատանքային համատեքստում:

### ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԸ

<sup>37</sup> «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենք, ընդունված՝ 2017 թվականի հունիսի 9-ին, հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=172131>:

2022 թվականին «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքում կատարված օրենսդրական փոփոխությունների արդյունքում ընդլայնվեց պաշտպանության ենթակա սուբյեկտների շրջանակը՝ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ ներառելով այն պաշտոնատար անձին, մարմին, կազմակերպությանը կամ կազմակերպության աշխատակցին,

- ◆ որոնց հետ ազդարարը գտնվում կամ գտնվել է՝
  - աշխատանքային հարաբերությունների մեջ,
  - քաղաքացիաիրավական հարաբերությունների մեջ,
  - վարչաիրավական հարաբերությունների մեջ,
  - այլ հարաբերությունների մեջ.
- ◆ որին դիմել է ծառայությունների մատուցման նպատակով.
- ◆ որը սխալմամբ ընկալվել է որպես ազդարար: Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ անձը համարվում է սխալմամբ ընկալվող ազդարար, եթե նա չազդարարելով ընկալվել է որպես ազդարար այլ անձանց կողմից, կամ որի հանդեպ կիրառվել են վնասակար գործողություններ:

Բացի այդ, օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն վնասակար գործողություններից պաշտպանության ենթակա սուբյեկտների շարքին են դասվում նաև ազդարարի հետ փոխկապակցված անձինք, որոնք օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն ընդգրկում են ազդարարի ամուսնուն, զավակներին, ծնողներին, քույրերին և եղբայրներին:

Ընդհանուր առմամբ, վերջին օրենսդրական փոփոխությունների արդյունքում «այլ հարաբերությունների մեջ» եզրույթի կիրառմամբ սահմանվել է պաշտպանության ենթակա սուբյեկտների լայն շրջանակ: Որոշակի խնդրահարույց է «որին դիմել է ծառայությունների մատուցման նպատակով» եզրույթի կիրառումը, քանի որ այն սահմանափակում է նշյալ չորս խմբի հարաբերություններից միայն քաղաքացիաիրավական հարաբերություններից միայն մեկ տեսակի հարաբերություններով, մինչդեռ ավելի տրամաբանական կլիներ, որ պաշտպանության ենթակա անձանց շրջանակը ներառեր նաև, օրինակ՝ աշխատանքի դիմորդներին, քանի որ նրանց նկատմամբ ևս կարող են կիրառվել վնասակար գործողություններ: Միննույն ժամանակ, հաշվի առնելով նաև դատական պրակտիկայի բացակայությունը՝ նպատակահարմար կլիներ ԵՄ հրահանգի օրինակով առնվազն պաշտոնական ուղեցույցների մակարդակով սահմանել այլ հարաբերությունների մեջ գտնվող անձանց որոշակի խմբերին, օրինակ՝ կամավորներ, պաշտպանության սուբյեկտների շրջանակում ներառել միջնորդներին, ովքեր օգնում են ազդարարին աշխատանքի հետ կապված համատեքստում ազդարարման գործընթացում, ինչպես նաև ընդլայնել փոխկապակցված անձանց շրջանակը՝

չսահմանափակվելով միայն արյունակցական կապի հիմքի վրա, այլ՝ ներառելով նաև, օրինակ, գործընկերներին:

## ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

«Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ պաշտպանության ենթակա տեղեկատվությունը ներառում է ազդարարումներ հետևյալի մասին՝

- ◆ կոռուպցիոն բնույթի դեպքեր, այն է՝ ՀՀ քրեական օրենսգրքի 1-ին հավելվածով սահմանված կոռուպցիոն հանցանքներ (նույն հոդվածի 7-րդ մաս).
- ◆ շահերի բախման կամ վարքագծի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ հայտարարագրման հետ կապված խախտումներ.
- ◆ հանրային շահերին ուղղված այլ վնաս, այն է՝ հանրային առողջությանը կամ շրջակա միջավայրին հասցված վնաս, պետության միջոցների կամ գույքի վատնում, ինչպես նաև այլ վնաս, որը պատճառվել է հասարակական կամ պետական կառավարման կարգին, կամ դրանց սպառնալիք (նույն հոդվածի 8-րդ մաս):

Միննույն ժամանակ, «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակի միջոցով ազդարարը կարող է անանուն եղանակով հաղորդել տեղեկություններ կոռուպցիոն բնույթի դեպքի կամ շահերի բախման կամ վարքագծի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ հայտարարագրման հետ կապված խախտման մասին: Նշյալից հետևում է, որ հարթակով հնարավոր չէ ներկայացնել հանրային շահերին ուղղված այլ վնասի, այն է՝ հանրային առողջությանը կամ շրջակա միջավայրին հասցված վնաս, պետության միջոցների կամ գույքի վատնում, ինչպես նաև այլ վնաս, որը պատճառվել է հասարակական կամ պետական կառավարման կարգին, կամ դրա սպառնալիքի վերաբերյալ տեղեկություններ: Արդյունքում, այն անձինք, որոնք կորոշեն հանրային շահերին ուղղված այլ վնասի վերաբերյալ ազդարարումներ ներկայացնել միասնական հարթակով, ենթակա չեն լինի պաշտպանության:

Արդյունքում, ՀՀ օրենսդրությամբ պաշտպանության ենթակա տեղեկատվության շրջանակը սահմանափակվում է կոռուպցիոն բնույթի և հանրային շահին վնաս հասցնող իրավախախտումներով՝ չներառելով այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են մարդու հիմնարար իրավունքների խախտումները, սպառողների պաշտպանությունը, աշխատողների առողջությունը, անվտանգությունը, ներառելով՝ ոտնձգությունները, և այլն: Միննույն ժամանակ, եթե կոռուպցիոն բնույթի իրավախախտումները

սպառիչ կերպով սահմանված են օրենսդրությամբ, ապա հանրային շահին պատճառված վնասի սահմանումն ավելի ընդհանուր բնույթի է և հստակորեն չի թվարկում, առնվազն՝ պաշտոնական ուղեցույցների մակարդակում, այդ ոլորտների սպառիչ ցանկ:

Հատկանշական է, որ թեև աշխատանքային հիմնարար իրավունքների խախտումները գործող օրենսդրությամբ չեն հանդիսանում ազդարարման առարկա, պրակտիկայում, ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կողմից գործարկվում է «EmployeeProtect» աշխատողների իրավունքների պաշտպանության հարթակը<sup>38</sup>, որով փաստացի իրականացվում է աշխատողների իրավունքների խախտումների վերաբերյալ ազդարարում, որը հիմք է հանդիսանում մարմնի կողմից վարչական վարույթ հարուցելու համար: Մինևույն ժամանակ, գործող օրենսդրական կարգավորումների շրջանակներում ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինն իրավասու չէ ընթացք տալ «EmployeeProtect» աշխատողների իրավունքների պաշտպանության հարթակով ստացված անանուն ազդարարումներին, որի մասին բարձրաձայնել է ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինը՝ Ազդարարման բազմաշահառու աշխատանքային հարթակի՝ 31.08.2023թ.-ին տեղի ունեցած 1-ին առցանց նիստի ընթացքում: Նմանապես, Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի քարտուղարությունը համակարգող «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի կողմից գործարկվող «Հայտնիր» նորաստեղծ առցանց ազդարարման հարթակը<sup>39</sup> և «Բիզպաշտպան» գործարար ոլորտի առցանց ազդարարման հարթակը<sup>40</sup> ևս չունեն որևէ օրենսդրական կարգավիճակ, որի մասին ավելի մանրամասն ներկայացված է «Ազդարարման համակարգի հայկական մոդելի տեսլականը. Ազդարարման հարցերով պատասխանատու մարմինների դերերի հստակեցում և կենտրոնական մարմնի ձևավորում» վերլուծության մեջ:

## ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

*«Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Ազդարարը գործում է բարեխղճորեն, եթե ազդարարելու պահին նա կոռուպցիոն բնույթի դեպքի կամ շահերի բախման կամ վարքագծի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ հայտարարագրման հետ կապված խախտման կամ հանրային շահերին*

<sup>38</sup> <https://employeeprotect.am/am>:

<sup>39</sup> <https://haytnir.am/am>:

<sup>40</sup> <https://bizprotect.am/>:

ուղղված այլ վնասի կամ դրանց սպառնալիքի վերաբերյալ ունի կասկածի ողջամիտ հիմքեր, նրա համոզմամբ տեղեկությունը ճշմարտացի է, և եթե նախքան ազդարարումը նա իր իրական հնարավորությունների սահմաններում միջոցներ է ձեռնարկել ստուգելու տեղեկության ճշտությունը և ամբողջականությունը»: Նշյալը պարունակում է երեք նախապայմանի պարտադիր առկայության պահանջ՝

- ◆ ազդարարն ունի իրավախախտման վերաբերյալ կասկածի ողջամիտ հիմքեր.
- ◆ նրա համոզմամբ տեղեկությունը ճշմարտացի է.
- ◆ նախքան ազդարարումը նա իր իրական հնարավորությունների սահմաններում միջոցներ է ձեռնարկել ստուգելու տեղեկության ճշտությունը և ամբողջականությունը:

Երրորդ բաղադրիչը չի բավարարում միջազգային, մասնավորապես՝ ՏՀԶԿ Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի մոնիթորինգի 5-րդ փուլի առնչությամբ սահմանված «Ազդարարման պահին ողջամիտ համոզմունք՝ արարքի սխալ լինելու վերաբերյալ» (“reasonable belief of wrongdoing at the time of reporting”) ստանդարտներին, քանի որ գործող իրավակարգավորմամբ՝ ազդարարի կողմից տեղեկության ճշտությունը և ամբողջականությունը ստուգելու նպատակով միջոցներ ձեռնարկելու պահանջ սահմանող վերջին տարրը խնդրահարույց է, գերազանցում է նշյալ շեմը և լրացուցիչ պարտականություն է սահմանում ազդարարի համար, ինչը չպետք է լինի վերջինիս պարտավորությունը: Նման կարգավորումները ոչ միայն չեն խթանում ազդարարումը, այլև՝ հնարավոր է, որ ետ պահեն անձանց ազդարարելուց:

Բացի այդ, նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ազդարարը գործում է անբարեխղճորեն, եթե առկա է հետևյալ պայմաններից որևէ մեկը՝

- ◆ բացակայում են օրենքով նախատեսված բարեխղճորեն գործելու հատկանիշները
- ◆ ազդարարումը կատարվել է ապօրինի եղանակով, այդ թվում՝ հանցագործության կատարմամբ կամ մարդու սահմանադրական իրավունքների խախտմամբ ձեռք բերված տեղեկությունների հիման վրա.
- ◆ իր կամ այլ անձի համար պահանջում կամ ստանում է որևէ առավելություն.
- ◆ այլ անձի վնաս պատճառելու նպատակով դիտավորությամբ հաղորդում է կեղծ տեղեկություններ:

Հոդվածի 1-ին մասով նախատեսված բարեխղճորեն գործելու պահանջը խնդրահարույց չէ, քանի որ այն փոխկապակցված չէ անձի շարժառիթների հետ: Միևնույն ժամանակ, թեև ՀՀ օրենսդրությամբ «հանրային շահով» առաջնորդվելու պահանջ նախատեսված չէ, անբարեխղճորեն գործելու պայմաններից «իր կամ այլ անձի համար պահանջում կամ ստանում է որևէ առավելություն» վերաբերվում է ազդարարի

շարժառիթներին, օրինակ՝ փորձելով խուսափել մոտավորապես պաշտոնանկությունից, հետևաբար ևս չի համապատասխանում ՏՀԶԿ վերոնշյալ նշաձողին:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Թեև ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ պայքարի» կոնվենցիայով ազդարարման առարկա են կազմում իրավասու մարմիններին ներկայացվող բոլոր տեսակի հաղորդումները, ինչպիսիք են ոստիկանություն ներկայացված քաղաքացիների հաղորդումները կոռուպցիոն դեպքերի վերաբերյալ, որոնց ականատես են եղել բացառապես իրենց՝ որպես հասարակության անդամի կարգավիճակում, միջազգային փորձ վերլուծությունը ցույց է տալիս, որ միջազգային կազմակերպությունների և պետությունների մեծամասնությունը որդեգրել են այն մոտեցումը, երբ ազդարարումը դիտարկվում է բացառապես աշխատանքային համատեքստում: ՀՀ-ն ևս կիրառում է այս մոտեցումը:

Միջազգային պրակտիկայում գործող ստանդարտի համաձայն՝ պաշտպանության ենթակա սուբյեկտների շրջանակը պետք է ներառի մարդկանց հնարավորինս լայն շրջանակ, որը տարածվում է մասնավոր կամ պետական հատվածում աշխատող ներկա և նախկին աշխատողների վրա, այդ թվում՝ աշխատանքի դիմորդների, քաղաքացիական իրավահարաբերություններում գտնվող անձանց, ինչպես նաև՝ սխալմամբ ընկալվող ազդարարների և ազդարարի հետ փոխկապված երրորդ անձանց վրա, ովքեր կարող են ենթարկվել վնասակար գործողության: ՀՀ-ում, ընդհանուր առմամբ, վերջին օրենսդրական փոփոխությունների արդյունքում սահմանվել է պաշտպանության ենթակա սուբյեկտների լայն շրջանակ, որը ներառում է աշխատանքային, քաղաքացիաիրավական, վարչաիրավական կամ այլ՝ գործող կամ նախկին իրավահարաբերությունները: Որոշակի խնդրահարույց է «որին դիմել է ծառայությունների մատուցման նպատակով» եզրույթի կիրառումը, քանի որ այն սահմանափակում է նշյալ չորս խմբի հարաբերություններից միայն քաղաքացիաիրավական հարաբերություններից միայն մեկ տեսակի հարաբերություններով, մինչդեռ ավելի տրամաբանական կլիներ, որ պաշտպանության ենթակա անձանց շրջանակը ներառեր նաև, օրինակ՝ աշխատանքի դիմորդներին, քանի որ նրանց նկատմամբ ևս կարող են կիրառվել վնասակար գործողություններ: Միննույն ժամանակ, հաշվի առնելով նաև դատական պրակտիկայի բացակայությունը՝ նպատակահարմար կլիներ ԵՄ հրահանգի օրինակով առնվազն պաշտոնական ուղեցույցների մակարդակով սահմանել այլ հարաբերությունների մեջ գտնվող անձանց որոշակի խմբերին, օրինակ՝ կամավորներ, պաշտպանության սուբյեկտների շրջանակում ներառել միջնորդներին, ովքեր օգնում են ազդարարին աշխատանքի հետ կապված համատեքստում ազդարարման գործընթացում, ինչպես նաև ընդլայնել փոխկապակցված անձանց շրջանակը՝ չսահմանափակվելով միայն արյունակցական կապի հիմքի վրա, այլ՝ ներառելով նաև, օրինակ, գործընկերներին:

Միջազգային պրակտիկայում նկատվում է միտում՝ ընդլայնելու պաշտպանության ենթակա տեղեկատվություն շրջանակը՝ ներառելով ապօրինի գործողությունների կամ հանրային շահերին հնարավոր վնաս պատճառող ցանկացած հարց, այդ թվում՝ մարդու հիմնարար իրավունքների, ներառյալ՝ աշխատանքային իրավունքների խախտումները: ՀՀ օրենսդրությամբ, պաշտպանության ենթակա տեղեկատվությունը ներառում է ազդարարումներ կոռուպցիոն բնույթի դեպքերի, շահերի բախման կամ վարքագծի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ հայտարարագրման հետ կապված խախտումների և հանրային շահերին ուղղված այլ վնասի, այն է՝ հանրային առողջությանը կամ շրջակա միջավայրին հասցված վնաս, պետության միջոցների կամ գույքի վատնում, ինչպես նաև այլ վնաս, որը պատճառվել է հասարակական կամ պետական կառավարման կարգին, կամ դրանց սպառնալիքի վերաբերյալ: Արդյունքում, ներառված չեն այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են մարդու հիմնարար իրավունքների խախտումները, սպառողների պաշտպանությունը, աշխատողների առողջությունը, անվտանգությունը, ներառելով՝ ոտնձգությունները, և այլն: Մինևույն ժամանակ, եթե կոռուպցիոն բնույթի իրավախախտումները սպառիչ կերպով սահմանված են օրենսդրությամբ, ապա հանրային շահին պատճառված վնասի սահմանումն ավելի ընդհանուր բնույթի է և հստակորեն չի թվարկում, առնվազն՝ պաշտոնական ուղեցույցների մակարդակում, այդ ոլորտների սպառիչ ցանկ:

Բացի այդ, ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակով հնարավոր չէ ներկայացնել հանրային շահերին ուղղված այլ վնասի վերաբերյալ տեղեկություններ, ինչի արդյունքում, այն անձինք, որոնք կորոշեն հանրային շահերին ուղղված այլ վնասի վերաբերյալ ազդարարումներ ներկայացնել միասնական հարթակով, ենթակա չեն լինի պաշտպանության: Հատկանշական է, որ թեև աշխատանքային հիմնարար իրավունքների խախտումները գործող օրենսդրությամբ չեն հանդիսանում ազդարարման առարկա, պրակտիկայում, ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կողմից գործարկվում է «EmployeeProtect» աշխատողների իրավունքների պաշտպանության հարթակը, որով փաստացի իրականացվում է աշխատողների իրավունքների խախտումների վերաբերյալ ազդարարում, սակայն գործող օրենսդրական կարգավորումների շրջանակներում տեսչական մարմինն իրավասու չէ ընթացք տալ հարթակով ստացված անանուն ազդարարումներին:

Միջազգային պրակտիկայում առկա «ողջամտության» ստանդարտը հետևյալն է՝ ազդարարները ենթակա են պաշտպանության, եթե նրանք ողջամիտ հիմքեր են ունեցել ենթադրելու, որ հաղորդվող խախտումների մասին տեղեկատվությունը ճշմարիտ է եղել ազդարարման պահին և չպետք է նախատեսված լինեն ճշմարտության ստուգմանն ուղղված հավելյալ պարտավորություններ ազդարարների համար: Լավ պրակտիկա է համարվում առնվազն պաշտոնական ուղեցույցների մակարդակով ստանդարտի մեկնաբանումը, այն է՝ արդյոք համարժեք գիտելիքներ, կրթություն և փորձ



ունեցող որևէ մեկը (հասակակիցը) կարող է համաձայնվել նման համոզմունքի հետ: Ազդարարը ենթակա է պաշտպանության, նույնիսկ եթե անձի հաղորդումն արվել է բարեխիղճ մոլորությամբ, սակայն հանցագործությունը չի ապացուցվում հետաքննության արդյունքում: Հետևաբար, ուղղակի դիտավորությամբ, այսինքն՝ գիտակցաբար բացահայտ կեղծ տվյալների հաղորդումը այս չափանիշի համաձայն չեն հանդիսանում ազդարարումներ:

Միևնույն ժամանակ, մի շարք կազմակերպություններ և պետություններ մտահոգություններ են հայտնել «բարեխղճության» տարրի չափից ավելի շեշտադրման կամ այն «շարժառիթների» հետ նույնականացնելու վտանգի առկայությամբ: Այս կապակցությամբ որդեգրվել են տարբեր մոտոցումներ, այդ թվում՝ բարեխղճության պահանջը ազդարարներին պաշտպանության տրամադրման պայմանների մեջ առհասարակ չներառելը, ներառելու դեպքում՝ վերջինիս փոխկապակցումը ազդարարման առարկա կազմող տեղեկատվության և ոչ թե՛ ազդարարի շարժառիթների հետ, «բարեխղճության կանխավարկածի» կիրառումը, երբ բարեխղճության բացակայության ապացուցման բեռը դրվում է մեղադրվող անձի վրա և բարեխղճության պայմանի սահմանումը ոչ թե՛ որպես ազդարարներին պաշտպանության, այլ՝ փոխհատուցման տրամադրման նախապայման:

ՀՀ ազդարարման գործող իրավակարգավորմամբ «ողջամտության» տարրը չի բավարարում «Ազդարարման պահին ողջամիտ համոզմունք՝ արարքի սխալ լինելու վերաբերյալ» միջազգային ստանդարտին, քանի որ նախատեսված է ազդարարի կողմից տեղեկության ճշտությունը և ամբողջականությունը ստուգելու նպատակով միջոցներ ձեռնարկելու պահանջ, ինչը գերազանցում է նշյալ շեմը և լրացուցիչ պարտականություն է սահմանում ազդարարի համար, ինչը չպետք է լինի վերջինիս պարտավորությունը: Նման կարգավորումները ոչ միայն չեն խթանում ազդարարումը, այլև՝ հնարավոր է, որ ետ պահեն անձանց ազդարարելուց: Ինչ վերաբերվում է «բարեխղճության» տարրին, նախատեսված բարեխղճորեն գործելու պահանջը խնդրահարույց չէ, քանի որ այն փոխկապակցված չէ անձի շարժառիթների հետ: Միևնույն ժամանակ, թեև ՀՀ օրենսդրությամբ «հանրային շահով» առաջնորդվելու պահանջ նախատեսված չէ, անբարեխղճորեն գործելու պայմաններից է «իր կամ այլ անձի համար որևէ առավելություն պահանջելը կամ ստանալը», ինչը վերաբերվում է ազդարարի շարժառիթներին, օրինակ՝ փորձելով խուսափել մոտալուստ պաշտոնանկությունից, հետևաբար չի համապատասխանում միջազգային ստանդարտներին:

## ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ◆ Ընդլայնել և հստակեցնել պաշտպանության ենթակա սուբյեկտների շրջանակը, այդ նպատակով՝ վերանայել «Ազդարարման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված՝ «որին դիմել է ծառայությունների մատուցման նպատակով» եզրույթի կիրառումը, քանի որ այն սահմանափակում է օրենքով նախատեսված չորս խմբի հարաբերություններից միայն քաղաքացիաիրավական հարաբերություններից միայն մեկ տեսակի հարաբերություններով, որպեսզի պաշտպանության ենթակա անձանց շրջանակը ներառի նաև, օրինակ՝ աշխատանքի դիմորդներին, քանի որ նրանց նկատմամբ ևս կարող են կիրառվել վնասակար գործողություններ: Մինևույն ժամանակ, հաշվի առնելով նաև դատական պրակտիկայի բացակայությունը՝ ԵՄ հրահանգի օրինակով առնվազն պաշտոնական ուղեցույցների մակարդակով սահմանել այլ հարաբերությունների մեջ գտնվող անձանց որոշակի խմբերին, օրինակ՝ կամավորներ, պաշտպանության սուբյեկտների շրջանակում ներառել միջնորդներին, ովքեր օգնում են ազդարարին աշխատանքի հետ կապված համատեքստում ազդարարման գործընթացում, ինչպես նաև ընդլայնել փոխկապակցված անձանց շրջանակը՝ չսահմանափակվելով միայն արյունակցական կապի հիմքի վրա, այլ՝ ներառելով նաև, օրինակ, գործընկերներին:
- ◆ Ընդլայնել պաշտպանության ենթակա տեղեկատվություն շրջանակը՝ ներառելով ապօրինի գործողությունների կամ հանրային շահերին հնարավոր վնաս պատճառող ցանկացած հարց, այդ թվում՝ մարդու հիմնարար իրավունքների, ներառյալ՝ աշխատանքային իրավունքների խախտումները, սպառողների պաշտպանությունը, աշխատողների առողջությունը, անվտանգությունը, ներառելով՝ ոտնձգությունները, և այլն: Այդ համատեքստում ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կողմից գործարկվող «EmployeeProtect» աշխատողների իրավունքների պաշտպանության հարթակըին տրամադրել օրենսդրական կարգավիճակ և իրավասություն՝ ընթացք տալ հարթակով ստացված անանուն ազդարարումներին:
- ◆ «Ազդարարման պահին ողջամիտ համոզմունք՝ արարքի սխալ լինելու վերաբերյալ» միջազգային ստանդարտին համապատասխանեցնելու նպատակով վերացնել՝ ազդարարի կողմից տեղեկության ճշտությունը և ամբողջականությունը ստուգելու նպատակով միջոցներ ձեռնարկելու լրացուցիչ պարտականություն սահմանող պահանջը: Բացի այդ, վերանայել անբարեխղճորեն գործելու պայմաններից է «իր կամ այլ անձի համար որևէ առավելություն պահանջելը կամ ստանալը», ինչը վերաբերվում է ազդարարի շարժառիթներին, սահմանելով

այն՝ ոչ թե պաշտպանության տրամադրման, այլ՝ փոխհատուցման և խրախուսման միջոցների  
տրամադրման նախապայման: